ԼՂԻՄ. ԽԱԲՈՒՍԻԿ ԱՆԴՈՐՐ

Լեռնային Ղարաբաղի Իճճևանի մարզի իրադրությունը վերջին օրերս չի փոխվել: Զեռնարկությունները, կազմակերպությունները և հիմնարկները հիմնականում աշխատում են: Սակայն անհրաժեշտ հումքի և նյութերի մատակարարման շարունակական բեդհատումները կոլեկտիվներին թույլ չեն տալիս վերականգնելու սովորական աշխատանքային ռիթմը:

Նոյեմբերի 12-ին մարզային կենտրոնում տեղի ունեցավ ժողովրդատնտեսական տարբեր բնագավառներ բաժնված 17 վագոն՝ անասնակեր, գյուղատնտեսական տեխնիկա, պարենային ապրանքներ: Այդ օրը բեռնաթափվեց բեդամենը 13 վագոն: Ներկայումս բեռնաթափման տակ է 88 վագոն: Մարդիկ արդեն մոռացել են, թե վերջին անգամ երբ է կայարան ժամանել Բաքու—Ստեփանակերտ մարդատար գնացքը, իսկ ավտոճանապարհները շարունակում են մնալ չրջափակված, ինչն էլ ավելի է ուժեղացնում սոցիալական լարվածությունը:

ԼՂԻՄ-ի օպերատիվ իրադրությունը անդորրի խաբկանք է, քանի որ մարզի տարբեր անկյուններում գիշերը առաջացող կրակոցները սովորական երևույթ են դարձել այդ վայրերի համար:

— Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը, բնավ էլ մեծ ճույսեր չկապելով երկրի Գերագույն խորհրդի ներկայիս նստաշրջանի աշխատանքի հետ, միաժամանակ չի կորցնում լավատեսության զգացումը:— Արմենպրեսի թղթակցին ասաց կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի կազմակերպական բաժնի վարիչ Գեորգի Գերասիմյանը:— Նա միանշանակ ընտրությունը արդեն արել է: Արցախցիները վստահ են, որ վաղ թե ուշ ստիպված կլինեն հաշվի նստել այդ փաստի հետ: Կցանկանայինք, որ Հայաստանի մեր հայրենակիցները չկասկածեն մեր ազգ արիությանը: Մենք արդեն միասին ենք: Այդպիսին է բանակցության և արդարության կամքը:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)
Ստեփանակերտ